ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու

ԼՈՒՍՅԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
ՀՊՏՀ նախագծերի կառավարում մասնագիտության մագիստրանտ

ՔՐԻՍՏԻՆԵ ԹԱԹՈՍՅԱՆ
ՀՊՏՀ գործարար վարչարարություն մասնագիտության մագիստրանտ

ԻՆԳԱ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
ՀՊՏՀ հանրային կառավարում մասնագիտության մագիստրանտ

ԱՐԳԻՆԵ ՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀՊՏՀ նախագծերի կառավարում մասնագիտության մագիստրանտ

ՀՀ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Լոռու և Տավուշի մարզերն իրենց գեղատեսիլ բնությամբ, անտառածածկ լեռներով ու անդնդախոր ձորերով, առողջարար օդով ու բուժիչ ջրերով, պատմական ու ճարտարապետական հուշարձաններով, բնակչության ավանդական կենցաղով ու էթնիկ բազմազանությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պատմամշակութային, կրոնական, առողջարանային, քաղաքային, արկածային, սպորտային, փառատոնային, գաստրոնոմիական զբոսաշրջության, ագրո- և էկոզբոսաշրջության զարգացման համար: Գյուղական տարածքներում կյանքի աշխուժացման, համեմատաբար փոքր ներդրումներով եկամտաբեր ձեռնարկատիրության զարգացման

և մարզերի զբոսաշրջային ռեսուրսների առավել լիարժեք օգտագործման համար առանձնահատուկ կարևորություն ունի ագրոզբոսաշրջության զարգացումը:

COVID-19-ի ճամփորդական սահմանափակումները ստիպեցին 2020 թվականին նախապատվությունը տալ ներքին զբոսաշրջության զարգացմանը: Այս պայմաններում հատկապես մեծացել է գյուղական կամ ագրոզբոսաշրջության նկատմամբ քաղաքային բնակչության հետաքրքրությունը:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել << Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջային ռեսուրսները, ինչպես նաև բացահայտել զբոսաշրջության զարգացման խոչընդոտները և կատարել առկա ռեսուրսային ներուժի առավել լիարժեք օգտագործման առաջարկություններ:

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, ռեսուրս, Լոռի, Տավուշ, ենթակառուցվածք*

JEL: L83, O14, Z10

Ներածություն: Լոռու և Տավուշի մարզերն աչքի են ընկնում իրենց հարուստ բնությամբ, բնակլիմայական պայմաններով, թթվածնով հարուստ մաքուր օդով, հանքային բուժիչ ջրերով, անտառներով, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհով: Լոռու և Տավուշի մարզերի տարածքը հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ բերդեր, ամրոցներ, վանական համալիրներ, խաչքարեր, կամուրջներ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Առկա ռեսուրսային ներուժի հիման վրա այս մարզերում կարող են զարգանալ զբոսաշրջության տարբեր տեսակներ՝ կրոնական, պատմամշակութային, արկածային և սպորտային, գաստրոնոմիական, էկո- և ագրո-, քաղաքային և այլն: Ռեսուրսների վերլուծությունը թույլ կտա մշակել և առաջարկել նոր զբոսաշրջային երթուղիներ: Զբոսաշրջության զարգացումը կնպաստի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, բնակչության եկամուտների ավելացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը և այլն: Ուստի, ստորև մանրամասնորեն կանդրադառնանք առկա զբոսաշրջային ռեսուրսներին:

Գրականության ակնարկ: Միջազգային փորձը վկայում է, որ տարբեր երկրներում զբոսաշրջությունը դիտարկվում է որպես տարածաշրջանների և գյուղական համայնքների զարգացման կարևոր գործոն: Այն կարևոր գործոն է համարվում նաև գյուղական համայնքների կայուն զարգացման և աղքատության նվազեցման համար[1]: Մասնավորապես, զբոսաշրջությունը դիտարկվում է որպես գյուղական վայրերի տնտեսական զարգացման այլընտրանքային եղանակ: Օրինակ, ԱՄՆ գյուղական համայնքները կարևորում են զբոսաշրջությունը, որպեսզի դրանով խթանեն տնտեսական աճը և փոխհատուցեն գյուղատնտեսության ոլորտի վնասները[2]:

Իտալիայում ևս մեծապես կարևորվում է գյուղական զբոսաշրջության զարգացումը: Ներկայումս այն հանդես է գալիս որպես գյուղատնտեսական ավանդական գործունեության զուգահեռ ոլորտ, որը լրացուցիչ եկամուտ է

---

[1] Տե՛ս **Xue L., Kerstetter D.,** Rural Tourism and Livelihood Change: An Emic Perspective, Journal of Hospitality and Tourism Research, https://doi.org/10.1177/1096348018807289:

[2] Տե՛ս **Dong E., Wang Y., Morais D., Brooks D**., Segmenting the rural tourism market: The case of Potter County, Pennsylvania, USA, Journal of Vacation marketing, 2016, https://doi.org/10.1177/1356766712471231:

բերում և խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը: Զբաղվածության ոլորտում արդյունքները նշանակալի են հատկապես երկրի հարավային շրջաններում, կանանց և երիտասարդների համար[3]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Կանարյան կղզիներում, Լա Պալմայում ագրոզբոսաշրջության ավանդական գործունեությունը ընդհանուր շուկայի փոքր մասն է կազմում: Տնտեսական ազդեցության և զբոսաշրջիկների բավարարվածության բարձր ցուցանիշ արձանագրած հատվածներում զբոսաշրջիկները նաև բարձր մակարդակի բնապահպանական վարք են ցուցաբերում: Այսպիսով, գյուղական զբոսաշրջային ուղղությունները կարող են իրենց տնտեսական ցուցանիշները բարելավել՝ կենտրոնանալով շրջակա միջավայրի այն հատվածների վրա, որտեղ անհրաժեշտ է իրականացնել բնապահպանական քաղաքականություն՝ ներգրավելով համապատասխան հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների[4]:

Ագրոզբոսաշրջության առանձնահատկությունները, նշանակությունը և զարգացումը հետաքրքրության առարկա են ոչ միայն տնտեսագետների, այլև ազգագրագետների, փիլիսոփաների, հոգեբանների, աշխարհագետների, սոցիոլոգների և հասարակագիտության այլ ոլորտների գիտնականների համար: Ահավասիկ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր *Ա. Ի. Պանյուկովի* և հոգեբանական գիտությունների դոկտոր *Ա. Ի. Պանյուկովայի* կարծիքով՝ «Անցյալ դարի վերջին քառորդում ուրբանիզացիայի և գլոբալացման գործընթացները ագրոզբոսաշրջությունը դարձրին հրատապ երևույթ նախ Եվրոպայի և Ամերիկայի, իսկ այնուհետև Ռուսաստանի Դաշնության համար»[5]: Նույն հոդվածում հեղինակները նշում են, որ հանրահայտ Forbes ամսագիրն ընտրել է ինը երկիր, որտեղ նախընտրում են հետևել «զբոսաշրջային նորաձևությանը»: Ագրոզբոսաշրջությամբ առավելագույնս գրավիչ են Իտալիան, Խորվաթիան, Ուկրաինան, Չեխիան, Հայաստանը, Լեհաստանը, Կիպրոսը, ԱՄՆ-ը[6]: Կարծում ենք՝ պարզ է, որ Հայաստանի՝ այս ցանկում գտնվելը դեռևս չի վկայում իրականում ագրոզբոսաշրջության ոլորտում մեր երկրի նշանակալի ձեռքբերումների մասին, սակայն այն հանգամանքը, որ այն մեզանում դիտարկվում է որպես զբոսաշրջության նորամուծության կարևոր տեսակ, արդեն իսկ լուրջ նախադրյալ է հետագա զարգացման համար:

Մեր կարծիքով, մարզերի զբոսաշրջային ռեսուրսները ագրոզբոսաշրջության տեսանկյունից գնահատելու համար, կարևոր է *ագրոզբոսաշրջություն* հասկացության հստակ բնորոշումը: Այս հարցում հեղինակների մոտեցումները որոշակի տարբերություններ ունեն: Արտերկրի հեղինակների մի մասը հավասարության նշան է դնում *ագրոզբոսաշրջություն* և *գյուղական զբոսաշրջություն* եզրույթների միջև: Օրինակ, ըստ *Ջ. Քլոեզեի*՝ գյուղական զբոսաշրջությունը ներառում է գյուղական միջավայրում իրականացվող ամբողջ զբոսաշրջային գործունեությունը[7]: Իսկ *Թ. Ռաթսի* կարծիքով՝ գյուղական

---

[3] Տե՛ս **Lagravinese R.,** Rural tourism and ancient traditions: Evidence from Italian regions, Local Economy: The Journal of the Local Economy Policy Unit, 2013, https://doi.org/10.1177/0269094213496612:

[4] Տե՛ս **Fernández-Hernández C., León C.J., Araña J.E., Díaz-Pére F.,** Market segmentation, activities and environmental behaviour in rural tourism, Tourism Economics, 2015, https://doi.org/10.5367/te.2015.0476:

[5] Известия МГТУ «МАМИ» № 4(18), 2013, т. 2, ст. 93.

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս **Kloeze J.W.,** Rural Tourism: A Gender Approach,

զբոսաշրջությունը ենթադրում է հանգստացողների բնակություն գյուղական մթնոլորտում և ըստ ցանկության մասնակցություն գյուղատնտեսական աշխատանքներին[8]: Ահա այս հիմնարար մոտեցումներից ելնելով կարելի է գնահատել ագրոզբոսաշրջության մարզային ռեսուրսները:

ՀՀ-ում գյուղական զբոսաշրջության ռեսուրսների գնահատման մեթոդաբանության առումով ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ օգտակար հետազոտություն է կատարվել 2017 թ.[9]: Այս ուսումնասիրությունը մեթոդական ուղեցույց է, սակայն ունի նաև տեսական ու գործնական կարևոր հիմնադրույթներ, որոնք կիրառվել են սույն հետազոտության ընթացքում:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջային ռեսուրսները, բացահայտել զբոսաշրջության զարգացման խոչընդոտները և կատարել առկա ռեսուրսային ներուժի առավել լիարժեք օգտագործման առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջային ռեսուրսներն են, առարկան՝ ռեսուրսների հիման վրա զբոսաշրջության կազմակերպման և զարգացման հնարավորությունների վերլուծությունը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են տվյալների հավաքման և խմբավորման, փաստաթղթերի վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, միկրո- և մակրովերլուծության, SWOT վերլուծության, սոցիոլոգիական դիտարկման մեթոդներ:

Տվյալների հավաքման և խմբավորման ժամանակ կիրառվել են տարբեր աղբյուրների տեղեկատվական, վիճակագրական տվյալներ: Մասնավորապես, օգտագործվել են ինչպես մասնագիտական գրականության մեջ առկա տվյալներ, այնպես էլ ՀՀ վիճակագրական կոմիտեի, մարզպետարանների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվությունը, վերոնշյալ մարզերին վերաբերող զարգացման ծրագրեր և ռազմավարություններ, իրականացվել է փաստաթղթերի վերլուծություն:

Ինդուկցիայի և դեդուկցիայի միջոցով իրականացվել է վերլուծական-իմացական շարժում ինչպես ընդհանուրից դեպի մասնավորը, այնպես էլ մասնավորից դեպի ընդհանուրը: Մասնավորապես, տարբեր համայնքների ռեսուրսների վերլուծության հիման վրա կատարվել են նոր երթուղիների մշակման առաջարկներ:

Միկրո- և մակրովերլուծության ընթացքում իրականացվել է ինչպես առանձին համայնքների զբոսաշրջային, այնպես էլ մարզային ռեսուրսների և ենթակառուցվածքների վերլուծություն:

Հետազոտության ընթացքում կիրառվել է նաև դիտարկման մեթոդը, ինչի միջոցով բացահայտվել են տարբեր զբոսաշրջային ռեսուրսների առկա վիճակը, դրանց հասանելիությունը, նշված մարզերում զբոսաշրջության զարգացման առկա խոչընդոտները:

---

https://pdfs.semanticscholar.org/f3f4/829b08691154dc67deec311a90711e6a5d00.pdf?_ga=2.248583303.1257525698.1598266073-2106455267.1598266073:

[8] Տե՛ս **Rátz T.L. Puczkó L.**, Rural Tourism and Sustainable Development in Hungary, 1998, http://caribana.co.ve/formacion/Rural%20turism%20indicator.pdf.

[9] Տե՛ս Rural Tourism Resources Assessment Methodology Pilot Phase, Integrated Rural Tourism Development Project, Undp Armenia-2017:

SWOT վերլուծության մեթոդով իրականացվել է մարզերում առկա ռեսուրսային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն:

Վերլուծություն

Տավուշի և Լոռու մարզերի զբոսաշրջային ռեսուրսների վերլուծություն

Տավուշի մարզը հարուստ է պատմամշակութային կոթողներով, որոնց շարքին են դասվում ամրոցները և բերդերը (Տավուշ, Մանթաշ, Բուդուր, Գավարզին, Գագա, Բերդաքար, Ուզունթալայի դիտաշտարակ ամրոցաձև շենք, Թանիկ, Աղջկաբերդ, Աշոտ Երկաթ, Կայան, Բերդավան), եկեղեցիները և վանքերը (Հաղարծին, Առաքելոց, Դեղձնուտ, Սամսոն, Սրվեղ, Կիրանց, Մակարավանք, Ջուխտակ վանք, Մաթոսավանք, Գոշավանք, Մորու ձոր կամ Ծովզ վանք, Շխմուրադի վանք, Վարագավանք, Կապտավանք, Աղավնավանք, Խորանաշատ վանական համալիր), խաչքարերը և մահարձանները (Կիրանց, Բերքաբեր, Գանձաքար, Գոշ, Հաղարծին, Քնած խաչքարեր՝ Բերդում, Մխիթար Գոշի մահարձան), քարավանատները (Առաքելոց գյուղատեղի), կամուրջները (Սալահ, Սրանոց), ինչպես նաև արհեստները (գորգագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, փայտամշակություն, քարագործություն, քանդակագործություն, գինեգործություն), տոներ-ավանդույթները (Վարդավառ, Նուրի-նուրի, Չոբանի օր, Եդի օրեր), խաղերը (Ջջլախտի (տղաների խաղ), Կլասի, Կոխ, Քարկտիկ (տյապկի), Թելով խաղ, Սիբրի, Պարան (2+1), Չիլկի, Իշկտրուկի), հնավայրերը (Հովք), խոհանոցը (հոնասպաս, դդմաքաշովի, ուրցի խորոված, կոնչոլ, լոբիով սպաս, փթռուկ, մոխոխ, գառան արյուն, գառան խաշլամա, խաշիլ, խաթխաշ, ճմբուռ և այլն)[10]: Մարզի զբոսաշրջային առաջարկները ներկայանում են էկոլոգիական երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), լեռնահեծանվային երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), քայլարշավային արահետների (Դիլիջանի, Բերդի, Իջևանի տարածաշրջաններ) և Տրանսկովկասյան արահետի (հիմնականում՝ Դիլիջան ազգային պարկի տարածքում), ձիարշավների (հիմնականում՝ Իջևանի տարածաշրջան) տեսքով: Յուրահատուկ զբոսաշրջային առաջարկներ են Աչաջուր գյուղում նորաբաց գինու բակը և տարբեր բնակավայրերում տեղացի բնակիչների կողմից արտադրվող տարատեսակ հուշանվերները: Տավուշի մարզում կազմակերպվում են նաև փառատոներ: Հաղարծին վանական համալիրը, բացի պասիվ-ճանաչողական կրոնական զբոսաշրջությունից, առաջարկում է նաև ակտիվ-ճանաչողական զբոսաշրջություն՝ «Ապրիր ինչպես վանական» զբոսաշրջային արտադրանքի տեսքով: Մարզին բնորոշ զբոսաշրջային յուրահատուկ ռեսուրս է համարվում հուշաղբյուրների կառուցման մշակույթը (Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջաններ), որտեղ (հուշ-

[10] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հատոր Ա: Խմբագրական խորհուրդ, Եր., 2007, https://www.cadastre.am/atlasA, Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի հետազոտության արդյունքները ներկայացնող հաշվետվություններ, 2019, http://tavush.mtad.am/files/announcements/6448.pdf,
Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն)/ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Եր., 2014, Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Եր., 2009, http://tavush.mtad.am/files/announcements/6448.pdf:

աղբյուրներում) ցանկացած ոք կարող է իր ընտանիքի և ընկերների հետ կազմակերպել մեկօրյա հանգիստ (անվճար)[11]:

Տավուշի մարզը համարվում է զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ և ընդարձակ շուկա ունեցող մարզ, որի իրական զբոսաշրջային շուկան գնահատվում է տարեկան շուրջ 300000 զբոսաշրջիկ՝ կազմակերպված (13%) և ինքնակազմակերպ (87%) այցելությունների տեսքով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում, որպես զբոսաշրջության առանցքային տեսակներ, կարող են դիտարկվել հետևյալ տեսակները (իրենց ճյուղային տարատեսակներով)՝ առողջարանային/ռեկրեացիոն, էկոլոգիական, կրթական, էքստրեմալ/արկածային, ագրո/գյուղական, մշակութային (նյութական, ոչ նյութական, կրոնական): Տավուշի մարզում զբոսաշրջության հեռանկարային տեսակներ են համարվում մարզի ռեսուրսների վրա հիմնված հետևյալ տեսակները՝ գործարար (MICE), հնագիտական, գինու, սահմանամերձ, ջրային զբոսաշրջությունը (գետային, ջրամբարային), պարապլանիզմը, լեռնագնացությունը, ուխտագնացությունը[12]:

Լոռին առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ, հարուստ պատմամշակութային ժառանգությամբ և համարվում է հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի հուշարձաններ ու կոթողներ[13]:

Լոռու մարզը զբոսաշրջային մեծ ներուժ ունի, որը պայմանավորված է ոչ միայն բնության հուշարձաններով, այլև դարերի խորքից մեզ հասած պատմամշակութային մեծ արժեք ունեցող կոթողներով: Լոռու տարածքում մարդու մշակութային գործունեության հետքերը գալիս են վաղնջական ժամանակներից: Այդ մասին են վկայում դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ախթալայի և Շամլուղի մերձակայքում՝ Ժ. Մորգանի, Սանահինում և Դսեղում՝ Ալ. Երիցյանի, Որնակում (այժմ՝ Ակներ)՝ Ն.Մառի, Հաղպատում, Պրիվոլնոյեում, Յաղդանում՝ Ե. Թաղայաշվիլու, Օձունում՝ Ս. Տեր-Ավետիսյանի և այլոց պեղումներով ի հայտ եկած՝ մ.թ.ա 3-րդից 1-ին հազարամյակներին վերաբերող մշակույթի արժեքավոր հուշարձանները, նաև հետագայում Դեբեդի ավազանի, Կիրովականի, Լոռի բերդի, Քոսի ճոթերի, Ղարաքոթուկի, Լորուտի և այլ հնավայրերի պեղումների արդյունքները[14]:

Պատմական նշանակություն ունեն նաև մարզում գտնվող Լոռի բերդի փլատակները[15], Օձունի, Քոբայրի և Ախթալայի վանքերը և բազմաթիվ այլ կառույցներ, որոնցից յուրաքանչյուրի հետ կապվում են յուրօրինակ և հետաքրքիր պատմություններ:

---

[11] Տե՛ս Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի հետազոտության արդյունքները ներկայացնող հաշվետվություններ, 2019:

[12] Տե՛ս ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2019-2024, էջ 15-16, Տավուշ-2019, http://tavush.mtad.am/files/announcements/6448.pdf:

[13] Տե՛ս ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն, Լոռի, 2017, էջ 8-9, http://lori.mtad.am/files/docs/48161.pdf:

[14] Տե՛ս ՀՀ Լոռու մարզպետարան, Լոռու մարզի պատմամշակութային կոթողները, http://lori.mtad.am/historicalmonuments/:

[15] Տե՛ս Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, 2019-2020, էջ 32, http://lori.mtad.am/files/docs/48550.pdf:

Լոռու մարզում հեռանկարային ճյուղերն են արկածային (լեռնագնացության համար հիանալի են Լալվար, Ձիթանից (Մայմեխ), Աչքասար, Բազումթառ, Թեժ լեռները), լեռնահեծանվային զբոսաշրջությունը: Վանաձոր քաղաքում գործում է «Բու» լեռնահեծանվային պարկը: Ստեփանավանում գործում է «ԼՈՌԷ» ակտիվ հանգստի կենտրոնը, որը կազմակերպում է քայլարշավներ, էքսկուրսիաներ, կինոդիտումներ և այլն (էքստրիմ պարկ, ժայռամագլցման արհեստական պատ, զիպլայն, խարույկ վառելու հնարավորություն): Հեռանկարային են նաև հետևյալ ուղղությունները՝ առողջարանային (Լոռու մարզն ունի բնական և մարդածին ռեկրեացիոն բազմաթիվ ռեսուրսներ, կան առողջարաններ, կավաբուժության կենտրոն՝ նաև խոտաբույսերի տաք պարկերով մերսման հնարավորությամբ, հանքային աղբյուրներ), գյուղական (զբոսաշրջիկները հնարավորություն ունեն մասնակցելու մրգերի բերքահավաքի, բերքի վերամշակման, տարբեր մրգերից օղու պատրաստման, մեղրի պատրաստման, համտեսի արարողության, արիշտայի պատրաստման, կճուճում պանրի հորման, խնոցիում կարագի պատրաստման, թոնիրում լավաշի, հացի թխման արարողության), գաստրոզբոսաշրջությունը (հայտնի է պանիրների տեսակներով և ուտելի խոտաբույսերով, բազմատեսակ են լոռեցիների թթվատեսակները՝ շուշան, ղանձիլ, սինդրիկ և այլն), էկոզբոսաշրջությունը (մեր երկրում առկա մոտ 300 տեսակի թռչուններից 260-ը ձվադրում են Լոռու մարզի տարածքում): Էկոզբոսաշրջության զարգացման համար ստեղծվել են վրանային և ճամբարային կացարաններ, էկոերթուղիների ցուցանակներ և այլն, քաղաքային զբոսաշրջությունը զարգացման ներուժ ունի Վանաձորում[16]:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների՝ 2020 թ. դրությամբ ՀՀ-ում կա 24225 պատմամշակութային հուշարձան: *Լոռու մարզում պատմամշակութային հուշարձանների թիվը կազմում է 3046, Տավուշում՝ 1996*[17]*:*

2018 թ. դրությամբ ՀՀ-ում եղել է 104 թանգարան, որի 64%-ը՝ Երևանում: Լոռու մարզում կա 8 թանգարան, որից 4-ը՝ պատմական, 1-ը՝ երկրագիտական, 2-ը՝ հուշարձանային, 1-ը՝ գրականության և արվեստի: Տավուշում կա 3 թանգարան, 2-ը՝ պատմական, 1-ը՝ երկրագիտական[18]: Լոռու մարզում թանգարանների այցելուների թվաքանակը 2018 թ. կազմել է 32421, իսկ Տավուշում՝ 11043[19]:

Լոռու և Տավուշի մարզերն ունեն կրոնական զբոսաշրջության զարգացման նախադրյալներ: Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների՝ ՀՀ-ում առկա է 1475 եկեղեցի, 610 մատուռ: Կրոնական կառույցների ընդհանուր թիվը կազմում է 2444 միավոր: *Լոռու մարզում կրոնական կա-*

---

[16] Տե՛ս Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, 2019-2020, էջ 18, http://lori.mtad.am/files/docs/48550.pdf:

[17] Տեղեկությունը տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:

[18] Տե՛ս ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., էջ 590, https://www.armstat.am/file/article /soc_vich_2018_25.pdf:

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 591:

ռույցների թիվը կազմում է 427, Տավուշում՝ 291[20]*: Լոռու մարզի Հաղպատի և Սանահինի վանական համալիրները 1996 թ. ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում*[21]: Լոռու մարզի եկեղեցիներից ու վանական համալիրներից են Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին, Աքորի Սուրբ Գևորգ եկեղեցին, Օձունի տաճարը, Սուրբ Մինաս եկեղեցական համալիրը, Սանահինի վանքը, Հաղպատավանքը, Ախթալայի վանքը, Քոբայրի վանքը, Հոռոմայրի Սուրբ Նշանը և այլն: Տավուշի մարզի եկեղեցիներից ու վանական համալիրներից են Աղավնավանքը, Ջուխտակը, Մաթոսավանքը, Սամսոնավանքը, Մակարավանքը, Գոշավանքը, Սուրբ Սարգիս վանքը, Կիրանց վանքը, Հաղարծնի վանքը, Նոր Վարագավանքը և այլն:

Լոռու և Տավուշի մարզերը հարուստ են նաև առողջարանային ռեսուրսներով: ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն Հայաստանում առանձնացրել է 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր և տորֆեր, կլիմայաբուժության կազմակերպման համար բարենպաստ կլիմայական պայմաններ: Այդ կուրորտային գոտիներից 3-ը գտնվում են վերոնշյալ մարզերում: Դրանք են.

1. Դիլիջանի լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են լեռնային շղթայի բարենպաստ լեռնաանտառային կլիմայական պայմանները և սառը, ածխաթթվային, բուժիչ հանքային ջրերը: Դիլիջանի բուժառողջարարական ռեսուրսներն իրենց հատկություններով շատ մոտ են, իսկ որոշ ցուցանիշներով գերազանցում են այնպիսի հանրահայտ առողջարաններին, ինչպիսիք են Բորժոմին, Աբասթումանը, Կիսլովոդսկը, Էսենտուկին, Պյատիգորսկը և այլն: Դիլիջանում գործում է «Լեռնային Հայաստան» առողջարանը:
2. Ստեփանավան-Գյուլագարակ լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են չափավոր սառը, անտառային կլիման, հարուստ բուսականությունը, անտառային զանգվածը, մաքուր օդը, ածխաթթվային հանքային ջրերը:
3. Լոռու կուրորտային գոտի, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ լեռնաանտառային կլիման, հանքային ջրերի աղբյուրները, բուժիչ տորֆի հանքաշերտերը[22]: Վանաձորի առողջարանում բուժում են աղեստամոքսային, ծայրամասային նյարդային համակարգի, հենաշարժական ապարատի, շնչառական համակարգի, կանանց և տղամարդկանց սեռական օրգանների խրոնիկական-բորբոքային, էնդոկրին համակարգի, առաջին և երկրորդ աստիճանի հիպերտոնիկ հիվանդություններ[23]:

Լոռու և Տավուշի մարզերում էական նախադրյալներ կան էկոզբոսաշրջության զարգացման համար:

---

[20] Տեղեկությունը տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:

[21] Տե՛ս Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am:

[22] Տե՛ս Атлас-климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна. Ереван, 2010, էջ 124–133:

[23] Տե՛ս Վանաձորի «Արմենիա» առողջարան, https://vanadzorarmenia.am/?page_id=2195:

Տավուշի մարզում է գտնվում Դիլիջան ազգային պարկը, որը ստեղծվել է 2002 թ.՝ կաղնու և հաճարենու ռելիկտային անտառների, հատապտղային կենու եզակի պուրակի, բնական սոճուտների, հանքային աղբյուրների սնման մակերեսների, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով (33765.0 հա):

27 պետական արգելավայրերից այս մարզերում են գտնվում.

- Գյուլագարակի արգելավայրը (Լոռի), որը ստեղծվել է 1958 թ.՝ ռելիկտային սոճու անտառների պահպանության նպատակով (2576.0 հա),
- Կովկասյան մրտավարդենու արգելավայրը (Լոռի), որը ստեղծվել է 1959 թ.՝ ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի պահպանության նպատակով (1000.0 հա),
- Մրգահովտի արգելավայրը (Լոռի), որը ստեղծվել է 1971 թ.՝ խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով (3368.0 հա),
- Ախնաբադի կենու արգելավայրը (Տավուշ), որը ստեղծվել է 1958 թ.՝ ռելիկտային Կենի հատապտղային տեսակի պահպանության նպատակով (25.0 հա),
- Արջատխլենու արգելավայրը (Տավուշ), որը ստեղծվել է 1958 թ.՝ ռելիկտային արջատխլենու և կենու պուրակների պահպանության նպատակով (40.0 հա),
- Գանձաքարի արգելավայրը (Տավուշ), որը ստեղծվել է 1971 թ.՝ լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր կենդանիների (այծյամ, գորշ արջ, Կովկասյան մարեհավ) պահպանության նպատակով (6813.0 հա),
- Իջևանի արգելավայրը (Տավուշ), որը ստեղծվել է 1971 թ.՝ անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով (5908.0 հա),
- Ձիկատարի արգելավայրը (Տավուշ), որը ստեղծվել է 2010 թ.՝ անտառային էկոհամակարգերի պահպանության նպատակով (150.0 հա)[24]:

Լոռու մարզի առավել ուշագրավ բնական հուշարձաններից են Լոռու ձորը՝ Դեբեդի կիրճում, Բոլոր քարը՝ Վանաձորում, Մայորի ձորը՝ Ստեփանավանում, Մայորի քարափը՝ Դսեղ գյուղի մոտ, Տզրուկի ջրվեժը՝ Աթան գյուղի մոտ, Ալմաստի լիճը՝ Ագարակ գյուղի մոտ, Թռչկանի ջրվեժը՝ Ձիչկան գետի մոտ, Դսեղի լճերը, Գայլաձորի կիրճը, Ձորագետի, Փամբակի, Վանաձորի հովիտները և այլն[25]:

Տավուշի մարզի առավել ուշագրավ բնական հուշարձաններից են Կալաքար լեռը, Օձաքար լեռը, Զորականի սոսին, Ձիկատարի տանձուտը, Ոսկեպարի կենին, Ջոնջոլկուտը և այլն[26]:

---

[24] Տե՛ս ՀՀ Կառավարության 25 սեպտեմբերի 2014 թ. N 1059-Ա որոշումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZIPVB1H-dD778KWYVPOB9gkHMPWflzAYrEh_RCKct51pJ4VyeNfio:

[25] Տե՛ս Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, 2019-2020 թթ., էջ 60, http://lori.mtad.am/files/docs/48550.pdf:

[26] Տե՛ս ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամա-

2018 թ. էկոզբոսաշրջիկների թվաքանակը բնության հատուկ պահպանվող տարածքներում կազմել է 412792, որի շուրջ 90%-ը Սևանի և Դիլիջանի այցելուներն են: Դիլիջան ազգային պարկի այցելուների թիվը կազմել է 120000, «Զիկատար» բնապահպանական կենտրոն այցելել է 340, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ՝ 36530 մարդ[27]:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոզբոսաշրջության աջակցության և զարգացման բաժնի կողմից մշակվել են Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) էկոզբոսաշրջության զարգացման երթուղիներ[28]: Դիլիջան ազգային պարկում մշակվել է 12 երթուղի՝ ք. Դիլիջան–Մաթոսավանք, ք. Դիլիջան–Ջուխտակ վանք–Մատուռ, ք. Դիլիջան (Շամախյան)–Հաղարծին վանք, Պարզ լիճ–Գոշավանք, ք. Դիլիջան–Թթուջուր–Պարզ լիճ, Աղավնավանք-Կենու պուրակ, Հաղարծին գյուղ– Աբեղաքար, ք. Դիլիջան–Այրիդաշտ, Գոշավանք–Գոշ (Տզրկա) լիճ, Դիլիջան ԱՊ ՊՈԱԿ–Ջրվեժ, ք. Դիլիջան–Դիլիջանի լեռնաշղթա–ք. Դիլիջան, հեծանվային երթուղի:

«Զիկատար» բնապահպանական կենտրոնում կա 4 երթուղի՝ Մշկավանքի տարածք, «Զիկատար» արգելավայր, Կենու պուրակ, «Խեչքար» տեղամաս[29]:

Լոռու և Տավուշի մարզերում բարենպաստ պայմաններ կան նաև սպորտային և արկածային զբոսաշրջության զարգացման համար: Օրինակ, Դիլիջանի Պարզ լճի տեղանքից անտառներով մինչև Գոշավանք հասնող ճանապարհը հարմար է թրեյքինգ զբոսաշրջային մարզաձևի համար[30]: Տավուշի մարզում գտնվող Ենոքավան գյուղում «Յելլ էքստրիմ պարկն» առաջարկում է զիփլայն էքստրեմալ մարզաձևը և այլ ծառայություններ[31]:

Արկածային զբոսաշրջության սիրահարները կարող են ռաֆտինգի մասնակցել Դեբեդ գետի վրա: 2018 թ. առաջին անգամ Լոռու մարզի Թումանյան համայնքում՝ Դեբեդ գետի մոտ, անցկացվել է ռաֆտինգ՝ արագահոս գետով փչովի նավակներով նավարկություն: Մինչ այդ՝ 2017 թ. աշնանը, Դեբեդ գետի վրա ռաֆտինգ իրականացնելու նպատակով, հայ և օտարերկրյա փորձագետների կողմից իրականացվել էր ուսումնասիրություն և արձանագրվել էր, որ Դեբեդն ունի ռաֆտինգի համար բարենպաստ՝ 4+ աստիճանի բարդություն[32]:

սերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ, Հաշվետվություն, «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ, Եր., 2012, http://www.zikatar.am/download/final_report_natural_monuments_2012.pdf:

[27] Տվյալները տրամադրել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժինը:

[28] Տե՛ս էկոտուրիստական ուղեցույց, էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, ՀՀ բնապահպանության նախարարություն, Եր., 2018, էջ 1-60:

[29] Տե՛ս նույն տեղը:

[30] «ՀՀ-ում սպորտային զբոսաշրջության զարգացման հայեցակարգին, հայեցակարգից բխող 2019-2022 թթ. ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/963/about:

[31] https://yellextremepark.com/hy/services

[32] Տե՛ս Հայաստանում առաջին անգամ անցկացվել է ռաֆտինգ, 2018, https://www.panorama.am/am/news/2018/05/21/%D4%B4%D5%A5%D5%A2%D5%A5%D5%A4-%D5%BC%D5%A1%D6%86%D5%BF%D5%AB%D5%B6%D5%A3/1952310:

Սպորտային զբոսաշրջության հիանալի վայր կարող է լինել Վանաձորը, ինչին կնպաստի կանադացիների կողմից Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա լեռնադահուկային համալիրի կառուցումը, որը ներառելու է նստատեղերով ճոպանուղի Մայմեխի ստորոտում՝ անհրաժեշտ ենթակառուցվածքներով (հյուրանոցներ, ավտոկայանատեղեր, դահուկների վարձույթի կայաններ, ռեստորան, սրճարան և այն): Մայմեխ լեռան բարձրությունը 3081 մ է[33]:

Լոռու մարզում կարող են կազմակերպվել նաև լեռնագնացության տուրեր՝ Լալվար լեռ, Ձիթանից լեռ, Աչքասար լեռ, Բազումթառ լեռ, Թեժ լեռ, Վուլկան Լեռ, նաև քայլարշավներ, հեծանվային տուրեր[34]:

Լոռու և Տավուշի մարզերն ունեն հին հայկական ավանդական համեղ ճաշատեսակներ, ինչի հիման վրա կարելի է կազմակերպել գաստրոտուրեր: Լոռու մարզի առավել հայտնի ավանդական ճաշատեսակներն են՝ Լոռվա բորանի, խաշիլ, ավելուկի աղցան, պանիր և դրանով պատրաստված կերակուրներ, օրինակ՝ թել պանրով ձվածեղ (եղ ու ջիլ) և այլն: Տավուշի մարզի առավել հայտնի ավանդական ճաշատեսակներն են՝ Տավուշի բորանի, քաշիկա, սալի (թխվածքի տեսակ) և այլն[35]:

Տավուշում կարող է զարգանալ նաև կրթական զբոսաշրջությունը՝ շնորհիվ 2014 թ. հոկտեմբերին Դիլիջանում բացված UWC Դիլիջանի քոլեջի, որն աշխարհի միացյալ քոլեջներ (UWC) կրթական ցանցի՝ հետխորհրդային տարածաշրջանում առաջին միջազգային դպրոցն է: Այսօր քոլեջում սովորում է շուրջ 200 ուսանող՝ աշխարհի 80 երկրից: Դպրոցի հիմնադիրը «Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ» ընտանեկան հիմնադրամն է[36]:

Լոռու և Տավուշի մարզերում վերջին տարիներին կազմակերպվում են մի շարք փառատոներ՝ նպաստելով փառատոնային զբոսաշրջության զարգացմանը: 2020 թ. փառատոների օրացույցով նախատեսվել են միջոցառումներ, որոնցից վերոնշյալ մարզերում պետք է անցկացվեին հետևյալները[37].

- Ռաֆտինգի փառատոն, Թումանյան, Լոռի, մայիսի 30-31,
- Հայբույս փառատոն, Ենոքավան, Տավուշ, հունիսի 27,
- Ուտելի բույսերը հայկական խոհանոցում, Դսեղ, Լոռի, հուլիսի 11,
- Յելլ էքստրիմ փառատոն, Ենոքավան, Տավուշ, հուլիսի 25,
- Հապալասի փառատոն, Մարգահովիտ, Լոռի, հուլիսի 25,
- Մեղրի և հատապտուղների փառատոն, Բերդ, Տավուշ, օգոստոսի 8-9,
- Դիլիտոն, Դիլիջան, Տավուշ, օգոստոսի 15,
- Խորոված ի փառատոն, Ախթալա, Լոռի, օգոստոսի 22,

---

[33] Տե՛ս Մայմեխ ճոպանուղի, http://vanadzor.am/maymex-chopanuxi/:

[34] Տե՛ս Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, 2019-2020 թթ., էջ 20-21, http://lori.mtad.am/files/docs/48550.pdf:

[35] Տե՛ս **Գ. Թովմասյան,** Հայաստանի և Արցախի գաստրոքարտեզը որպես զբոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ, https://asue.am/am/amberd/publication/analytics/gastroenterology-of-armenia-and-artsakh-as-a-component-of-tourism-marketing:

[36] Տե՛ս UWC Dilijan College, https://uwcdilijan.org/admissions/scholarships:

[37] Տե՛ս Armenian festivals calendar, 2020, https://www.facebook.com/photo/?fbid=2480123452236431&set=pcb.2476352069280236:

- Արվեստների և արհեստների փառատոն, Դիլիջան, Տավուշ, սեպտեմբերի 5:

Ցավոք, նշված փառատոնները կորոնավիրուսի համավարակի պատճառով այս տարի հնարավոր չեղավ անցկացնել, սակայն, լինելով ավանդական (նշված վայրերում յուրաքանչյուր տարի կազմակերպվում են՝ գրավելով ոչ միայն ներքին, այլ նաև միջազգային զբոսաշրջիկների), կանցկացվեն գալիք տարիներին:

Լոռու և Տավուշի մարզում զարգացման մեծ հեռանկարներ ունի նաև *ագրոզբոսաշրջությունը*: Զբոսաշրջիկները կարող են ծանոթանալ հայկական գյուղական կենցաղին, մշակույթին և սովորույթներին, մասնակցել գյուղատնտեսական բազում աշխատանքների և այլն:

Այսպիսով, ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ Լոռիում և Տավուշում կարող են զարգանալ զբոսաշրջության պատմամշակութային, կրոնական, առողջարանային, քաղաքային, ագրո-, էկո-, արկածային, սպորտային, փառատոնային, գաստրոնոմիական, կրթական տեսակները:

Լոռու մարզում առանձնացրել ենք հետևյալ երթուղիները.

1. Տաշիր–Մեծավան–Պրիվոլնոյե,
2. Ստեփանավան–Դենդրոպարկ-Հոբարձի–Վարդաբլուր-Կուրթան,
3. Ստեփանավան–Լոռի բերդ-Գյուլագարակ–Գարգառ–Պուշկինո,
4. Վանաձոր–Սպիտակ–Շիրակամուտ–Թռչկանի ջրվեժ,
5. Վանաձոր–Ձորագետ–Դսեղ– Քարինջ–Ահնիձոր,
6. Ալավերդի–Սանահին–Ակներ–Ամոջ–Օձուն,
7. Ալավերդի–Հաղպատ–Ախթալա,
8. Ուխտագնացություն դեպի Հարթագյուղի Սուրբ Հովհաննես մատուռ:

Տավուշի մարզում առանձնացրել ենք հետևյալ երթուղիները.

1. Դիլիջան–Պարզ լիճ–Հաղարծին,
2. Դիլիջան ազգային պարկ,
3. Դիլիջան–Գոշ–Աղավնավանք–Խաչարձան–Ճերմակավան–Գեղատափ,
4. Իջևան–Լուսահովիտ–Այգեհովիտ–Վազաշեն,
5. Իջևան–Ենոքավան–Աչաջուր,
6. Բերդ–Ծաղկավան–Վարագավան,
7. Բերդ–Վերին Կարմիրաղբյուր–Արծվաբերդ–Չինարի,
8. Նոյեմբերյան–Կողբ–Բերդավան,
9. Նոյեմբերյան–Բաղանիս–Ոսկեպար–Կիրանց–Աճարկուտ:

ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում զբոսաշրջության հիմնական ենթակառուցվածքները

Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ *2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888-ը*: Նախորդ տարվա համեմատ, ժամանողների թվաքանակն աճել է 14.7%-ով[38]: 2019 թ., նախորդ տարվա համեմատ, 41.4 %-ով աճել է նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ 1544600 մարդ: Ներքին զբոսաշրջիկների մեջ գերակշիռ մաս են կազմում հանգստի և ժա-

[38] Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 139, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf:

մանցի նպատակով ճամփորդողները[39]: Ցավոք, չկա պաշտոնական վիճակագրություն, թե որքան են կազմել ներգնա և ներքին զբոսաշրջային այցելությունները՝ ըստ ՀՀ մարզերի:

Հարկ ենք համարում անդրադառնալ Լոռու և Տավուշի մարզերում առկա զբոսաշրջային ենթակառուցվածքներին: Նախ ներկայացնենք մարզերում ընդհանուր ծառայությունների ծավալի ցուցանիշները: Տավուշի մարզի ծառայությունների ծավալը ՀՀ ծառայությունների ծավալի ընդհանուր կառուցվածքում կազմում է 1%, Լոռու մարզինը՝ 1,2%: Տավուշում կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը կազմել է ՀՀ ընդհանուրի 1,7%-ը, Լոռիում՝ 0,8%-ը: Տավուշում մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալը կազմել է ՀՀ ընդհանուրի 0,04%-ը, Լոռիում՝ 0,01%-ը:

Աղյուսակ 1

Ծառայությունների ծավալը Լոռու և Տավուշի մարզերում, մլն ՀՀ դրամ[40]

	2015	2016	2017	2018
Ծառայությունների ծավալը, ընդամենը				
ՀՀ	1154348,9	1279611,2	1469320,6	1779252,7
Տավուշ	10597,1	10767,0	14111,0	16346,1
Լոռի	17663,7	15868,0	18303,1	21276,0
Կացության և հանրային սննդի կազմակերպում				
ՀՀ	90 815.4	94 387.9	112 035.6	150 901.7
Տավուշ	1 363.9	1 867.7	1 973.6	2 563.6
Լոռի	685,5	984,0	1229,0	1163,8
Մշակույթ, զվարճություններ, հանգիստ				
ՀՀ	176635,3	236156,8	284765,7	391864,1
Տավուշ	7,3	26,4	106,7	144,6
Լոռի	19,7	76,5	55,2	51,1

ՀՀ-ում վերջին տարիներին աճում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը: 2019 թ. ՀՀ-ում եղել է 702 ՀՏՕ, որից Երևանում՝ 413, Լոռիում՝ 18, Տավուշում՝ 74: Ընդ որում, Լոռու մարզի ՀՏՕ-ներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է ընդամենը 394, Տավուշում՝ 15368: Լոռիում ՀՏՕ-ների հասույթը կազմել է 354.6 մլն ՀՀ դրամ, Տավուշում՝ 1599.4 մլն ՀՀ դրամ:

2019 թ. ՀՀ-ում գործել է հանրային սննդի կազմակերպման 1894 օբյեկտ, որից 1252-ը՝ Երևանում, 18-ը՝ Լոռիում, 124-ը՝ Տավուշում:

Զբոսաշրջային գործակալությունների թիվը ՀՀ-ում 2019 թ. կազմել է 687 (36088.7 մլն ՀՀ դրամ ընդհանուր շրջանառության ծավալով), որից 578-ը՝ Երևանում, 14-ը՝ Լոռիում, 7-ը՝ Տավուշում[41]: Զբոսաշրջային գործակալություններն ունեն ինչպես ներգնա, այնպես էլ արտագնա և ներքին տուրեր, իրականացնում են մի շարք ծառայություններ՝ ավիատոմսերի ամրագրում և վա-

---

[39] Տե՛ս **Գ. Թովմասյան**, Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թ. և ի՞նչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում», https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context:

[40] Տե՛ս ՀՀ Լոռու մարզը թվերով, https://www.armstat.am/file/doc /99517268.pdf, ՀՀ Տավուշի մարզը թվերով, https://www.armstat.am/file /doc/99515863.pdf:

[41] Տեղեկությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն:

ճառք, հյուրանոցային համարների ամրագրում, վիզաների ձևակերպում, էքսկուրսիաների կազմակերպում Հայաստանում և այլն:

2016 թ. մեկնարկեց 3 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից, ՌԴ ֆինանսավորմամբ, Հայաստանի 60 գյուղում՝ զբոսաշրջության խթանման և աղքատության կրճատման նպատակով[42]: Ծրագրի շրջանակում Լոռիում և Տավուշում բացվել են զբոսաշրջության հետազոտությունների և զարգացման կենտրոններ[43], աջակցություն է ցուցաբերվել Լոռու Դեբեդ, Գուգարք, Սանահին գյուղական համայնքներին՝ զբոսաշրջության ենթակառուցվածքներ ստեղծելու համար: «Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնն իրականացրել է «ԷկոՏուն Լոռի»՝ պլաստմասսայե թափոնների վերամշակում, Pottery House Armenia՝ կավաբուժության կենտրոն, Debet Workation Hotel՝ հանգստի և աշխատանքի համար նախատեսված հյուրատուն ծրագրերը: Լոռու մարզպետարանի կողմից ստեղծվել է «Տուրիստական Լոռի» ֆեյսբուքյան էջը՝ ոլորտի ծառայություն մատուցող կազմակերպությունների ներգրավմամբ: Նպատակն է մեկ հարթակում համախմբել զբոսաշրջության ոլորտի կազմակերպիչներին, ներկայացնել ոլորտի նորությունները, պետության և մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերը, առաջարկներ և հաջողված պատմություններ[44]:

Կայուն զբոսաշրջության զարգացումը սահմանվել է որպես ՀՀ Տավուշի մարզի ռազմավարության հիմնական գերակայություններից մեկը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, էքստրեմալ, գյուղական, ագրոզբոսաշրջության, ճանաչողական և զբոսաշրջության այլ ճյուղերի վրա: Դրա համար մարզն ունի բոլոր նախադրյալները, իսկ պետական, տարածքային և տեղական մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ զբոսաշրջությունը դարձնելու մարզի տնտեսության զարգացման հիմնական ճյուղերից մեկը: Այդ ուղղությամբ 2019 թ. պետական, միջազգային և տեղական կազմակերպությունները կատարել են մեծածավալ ներդրումներ, որոնք շարունակական բնույթ կկրեն:

Ոլորտի թույլ կողմերից է համարվում զբոսաշրջային ենթակառուցվածքների անհավասարաչափ բաշխվածությունը մարզում: ԵՄ և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ 2017 թ. մեկնարկել է «Աջակցություն Դիլիջանին և հարակից բնակավայրերին» ծրագիրը, որի արդյունքում Դիլիջանում հիմնվել է Ինֆոկենտրոնը, մշակվել և կահավորվել են բազմաթիվ երթուղիներ, իրականացվել են Դիլիջանի ազգային պարկի զբոսաշրջային ուղիների մաքրման աշխատանքներ, Թեղուտ համայնքի տարածքում ագրոտաղավարի կառուցում և հանձնում ազգային պարկին, լճի հարակից տարածքում սպիտակ վրանի տեղադրման աշխատանքներ և այլն[45]:

---

[42] Տե՛ս Տուրիզմը կիաղթահարի հայաստանյան գյուղերի աղքատությունը, 2016, https://armeniasputnik.am/armenia/20160907/4830324/turizm-rusastan-mak-gyux.html:

[43] R&D Centers, http://www.rtd.am/en/rdcenters.

[44] Տե՛ս ՀՀ Լոռու մարզի 2019 թ. գործունեության ծրագրի մոնիտորինգի հաշվետվություն, էջ 11, http://lori.mtad.am/files/docs/46187.pdf:

[45] ՀՀ Տավուշի մարզի 2019 թ. գործունեության ծրագրի տարեկան մոնիտորինգի հաշվետվություն, էջ 6-7, http://tavush.mtad.am/development-plan/:

Աղյուսակ 2

Լոռու և Տավուշի մարզերում զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*	*Հնարավորություններ*	*Սպառնալիքներ*
Մարզերում զբոսաշրջության տարբեր տեսակների կազմակերպման անհրաժեշտ ռեսուրսների առկայություն	Մարզերում հյուրանոցային տնտեսության օբյեկտների սակավություն	Մարքեթինգային ակտիվ գործունեության իրականացման դեպքում զբոսաշրջիկների թվի մեծացում	Բնակչության եկամուտների ցածր մակարդակ
Գյուղական կենցաղ և ավանդույթներ	Մարզերում հանրային սննդի օբյեկտների սակավություն	Զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում	Աղքատության մակարդակ
Գեղատեսիլ բնություն և մաքուր օդ	Մարզերի որոշ վայրերում տեղեկատվական ցուցանակների բացակայություն	Ոլորտի օրենսդրական դաշտի բարելավում	Մարզերում բնակչության արտագաղթ
Գյուղական առողջարար, էկոլոգիական մաքուր սնունդ	Զբոսաշրջային մարքեթինգի և բրենդինգի արդյունավետության ցածր մակարդակ	Ոլորտի վիճակագրական հաշվառման բարելավում	Ներդրումների պակաս
Հայկական մեծ սփյուռքի առկայություն	Ոլորտի թերի օրենսդրական դաշտ	Վերապատրաստման և տեղեկատվական դասընթացների կազմակերպում ֆերմերների ու հյուրընկալողների համար	Անտառահատումներ
Ներգնա և ներքին զբոսաշրջային տուրերի առկայություն	Ոլորտի թերի վիճակագրական հաշվառում	Ներդրումների ներգրավման դեպքում ճանապարհների կառուցում	Ճանապարհների ոչ բարվոք վիճակ
Ագրոզբոսաշրջության տարբեր միջոցառումների առկայություն	Լեզվական խոչընդոտներ	Ագրոզբոսաշրջության ոլորտում կամավորական աշխատանքների իրականացման հնարավորություն	Սահմանային լարված վիճակ Ադրբեջանի հետ
Բազմատեսակ խոհանոց	Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի ներկա վիճակի և պահպանման ցածր մակարդակ	Ագրոզբոսաշրջության ծառայությունների համատեղում սպորտային, վերականգնողական և բուժական ծառայությունների հետ	Թերզարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքների հնարավոր բացասական ազդեցությունը զբոսաշրջիկների թվի վրա
Հյուրասեր բնակիչներ	Զբոսաշրջային տեղեկատվության պակաս	Ագրոզբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծում/ընդլայնում՝ կանանց ներգրավվածությունը մեծացնելու ուղղությամբ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ զբոսաշրջային օբյեկտների վերածելու վտանգ
Վարպետաց դասերի անցկացման հնարավորություն մի շարք հյուրատներում և անհատների կողմից	Ընդգծված ագրոտուրերի բացակայություն	Միջազգային մի շարք դրամաշնորհային ծրագրերին դիմելու հնարավորություն	Հարևան երկրներին նախապատվություն
Ագրոտուրերում մշակութային տուրերի առկայություն՝ այցելություն պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ	ՀՀ ագրոզբոսաշրջության ոլորտում ազգային ասոցիացիաների բացակայություն Տեղեկատվական համակարգերից օգտվելու հետ կապված բարդություններ	Սուբվենցիոն ծրագրերի իրականացման հնարավորություն, մասնավորապես՝ ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ	Երիտասարդ բնակչության նվազման միտում

Ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերլուծության նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն, որը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Այսպիսով, վերլուծությունը թույլ է տալիս ամփոփ ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են մարզերում զբոսաշրջության զարգացման գործում: Ուստի, հիմնական քայլերը պետք է ուղղված լինեն վերոնշյալ հիմնախնդիրների վերացմանը: Վերլուծության արդյունքում կատարվել են նաև առաջարկություններ, որոնք ամփոփ ներկայացված են հաջորդիվ:

Եզրակացություններ: Չնայած առկա ռեսուրսային հարուստ ներուժին՝ այնուամենայնիվ, նշված մարզերում կան զբոսաշրջության զարգացման խնդիրներ՝ կապված ենթակառուցվածքների թերզարգացածության, ոչ հավասարաչափ բաշխվածության, մարքեթինգային գործունեության և այլնի հետ:

Ամփոփելով ներկայացնենք խոչընդոտները և հիմնական քայլերը, որոնք անհրաժեշտ են Լոռու և Տավուշի մարզերում զբոսաշրջության զարգացման համար.

- հաշվի առնելով ուժեղ կողմերը՝ ռեսուրսների առկայությունը, գեղատեսիլ բնությունը, գյուղական կենցաղը, հյուրասիրության ավանդույթները, համեղ խոհանոցը և այլն, հարկ է մշակել տուրեր և երթուղիներ, որոնք կընդգրկեն զբոսաշրջության տարբեր տեսակներ:
- Անհրաժեշտ է բարելավել ոլորտի օրենսդրական դաշտը և վիճակագրական հաշվառումը: Հարկ է մշակել մարզերում զբոսաշրջության զարգացման առանձին ծրագրեր, որոնք կվերլուծեն մարզերի զբոսաշրջային ռեսուրսները, առկա վիճակը, զարգացման հիմնախնդիրները, ինչն էլ էական հիմք կհանդիսանա զարգացման քայլերի մշակման համար: Վիճակագրական հաշվառումը թերի է, մարզպետարանները չունեն զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ հստակ տվյալներ: Անշուշտ, վիճակագրության բարելավումը թույլ կտա հստակորեն հասկանալ ժամանող զբոսաշրջիկների թվաքանակը՝ ըստ տարիքի, սեռի, նախասիրությունների, ինչի հիման վրա ավելի հասցեական կլինեն համապատասխան ռազմավարությունները:
- Մարզերում հյուրանոցային տնտեսության և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը քիչ է: Կարևոր է մասնավոր ներդրումների, ինչպես նաև միջազգային դրամաշնորհների ներգրավումը, ինչի շնորհիվ կզարգանան զբոսաշրջային ենթակառուցվածքները:
- Հաջորդ կարևորագույն խնդիրը մարքեթինգի պակասն է: Անհրաժեշտ առաջարկի ու երթուղիների ձևավորումից հետո պետք է ապահովել դրա իրացումը մարքեթինգային տարբեր միջոցառումներով՝ օգտագործելով սոցիալական ցանցերով գովազդումը, influencer մարքեթինգը՝ հայտնի մարդկանց ներգրավմամբ և այլն: Անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր մարզի համար մշակել զբոսաշրջային բրենդ, ինչը կարտացոլի մարզի հիմնական զբոսաշրջային գրավչությունները և մարզը լավագույնս կդիրքավորի զբոսաշրջային շուկայում:
- Մարզերում քիչ է զբոսաշրջային տեղեկատվությունը, ուստի կարևոր է զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակների թվաքանակի ավելացումը:
- Զբոսաշրջությունը պետք է նպաստի կայուն զարգացման ուղղությունների իրականացմանը, ուստի կարևոր քայլ է շրջակա միջավայ-

րի պահպանության խնդիրների լուծումը, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանումը, դրանց ներառումը զբոսաշրջության մեջ: Զբոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծումը կնպաստի նաև զբաղվածության մեծացմանը, աղքատության և արտագաղթի նվազմանը:

- Մարզերում զբոսաշրջության զարգացման խոչընդոտներից է ճանապարհների ոչ բարվոք վիճակը, հատկապես՝ գյուղական ճանապարհների: Բացի դրանից, գյուղերից ոչ բոլորն ունեն մայրաքաղաքի հետ տրանսպորտային երթուղի: Չնայած զբոսաշրջիկները հիմնականում այցելում են զբոսաշրջային գործակալությունների տուրերով, սակայն ճանապարհների ոչ բարվոք վիճակը խոչընդոտում է գյուղական զբոսաշրջության զարգացումը, ինչպես նաև բոլոր համայնքները զբոսաշրջային երթուղիներում ներառելը:
- Մարզերում զբոսաշրջության զարգացման խոչընդոտներից է տեղեկատվական ցուցանակների բացակայությունը ճանապարհներին: Նույնիսկ Հաղպատ գյուղում չկա պատշաճ տեղեկատվական ցուցանակ՝ հասկանալու համար, թե ինչպես ուղևորվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում ներառված Հաղպատի վանական համալիր: Այս առումով միանգամայն կարևոր է տեղեկատվական ցուցանակների ավելացումը ճանապարհներին, որոնց միջոցով մարդիկ դյուրին կերպով ու արագ կգտնեն ճանապարհը դեպի զբոսաշրջային վայրեր:
- Հոդվածում ներկայացվեց Լոռու և Տավուշի մարզերի հիմնական զբոսաշրջային ռեսուրսները: Ներկայումս զբոսաշրջային գործակալություններն իրենց զբոսաշրջային փաթեթներում ներառում են առավել հայտնի ուղղությունները՝ հիմնականում դեպի Հաղպատ, Սանահին, Թռչկանի ջրվեժ, Ստեփանավանի դենդրոպարկ, Հարթագյուղի Սուրբ Հովհաննես մատուռ, Ախթալա, Օձուն, Դսեղ, ռաֆթինգ Դեբեդում, Դիլիջան ազգային պարկ, Ենոքավան, Հաղարծին, Գոշավանք և այլն: Սակայն տարբեր համայնքներում առկա ռեսուրսների հիման վրա կարող են մշակվել նոր ու ուշագրավ երթուղիներ, որոնք կնպաստեն ինչպես ներքին, այնպես էլ ներգնա զբոսաշրջության զարգացմանը:
- Զբոսաշրջության զարգացումն անշուշտ կնպաստի մարզերում եկամտի ավելացմանը, զբաղվածության մակարդակի մեծացմանը: Այս առումով, կարևոր է մարզերում տարբեր հետազոտությունների իրականացումը, որոնք թույլ կտան բացահայտել գյուղական համայնքներում գյուղացիների կողմից զբոսաշրջային առաջարկի հնարավորությունները և առկա հիմնախնդիրները: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ գյուղական համայնքներում շատ են մարդիկ, որոնք պատրաստ են իրենց տանը հյուրընկալել զբոսաշրջիկների, առաջարկել ագրոզբոսաշրջության տարբեր միջոցառումներ, էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային վայրեր: Սակայն խնդիրներ կան՝ կապված անհրաժեշտ ներդրումների ներգրավման հետ: Բացի դրանից, անհրաժեշտ են տեղեկատվական և վերապատրաստման դասընթացներ՝ զբոսաշրջիկների ընդունման և սպասարկման վերա-

բերյալ: Մյուս խնդիրը համագործակցության պակասն է զբոսաշրջային գործակալությունների հետ, որոնք զբոսաշրջիկ կներգրավեն տվյալ համայնք, իսկ հյուրընկալողները կկազմակերպեն տարբեր զբոսաշրջային միջոցառումներ:

- Մարզերի բնակիչներին լրացուցիչ եկամուտ է ապահովում նաև զբոսաշրջային տարբեր վայրերի տարածքում հուշանվերների վաճառքը: Կարելի է ասել, որ հուշանվերները բազմատեսակ չեն՝ այլ երկրներում վաճառվողների համեմատությամբ: Օրինակ, եկեղեցիների կամ սրբավայրերի տարածքում վաճառում են հիմնականում խաչեր, սրբանկարներ: Տարբեր երկրների փորձից ելնելով՝ կարելի է լրացնել հուշանվերների բազմազանությունը. ենթադրենք՝ տվյալ եկեղեցու կամ զբոսաշրջային վայրի նկարով կամ անվանմամբ տարատեսակ հագուստ, կենցաղային պարագաներ, սպասք, գրենական պիտույքներ, պահածոներ և այլն: Հուշանվերների տեսականու ավելացումը նաև լրացուցիչ եկամուտ կբերի բնակիչներին:

Այսպիսով, վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը թույլ կտա Լոռու և Տավուշի մարզերում, առկա ռեսուրսային ներուժի հիման վրա, զարգացնել զբոսաշրջության տարբեր տեսակներ:

Օգտագործված գրականություն

1. Էկոտուրիստական ուղեցույց, Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, ՀՀ բնապահպանության նախարարություն, Եր., 2018:
2. Թովմասյան Գ., Հայաստանի և Արցախի գաստրոքարտեզը որպես զբոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ, https://asue.am/am/amberd /publication/analytics/gastroenterology-of-armenia-and-artsakh-as-a-component-of-tourism-marketing:
3. Թովմասյան Գ., Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թ. և ի՞նչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում», https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context:
4. Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, 2019-2020 թթ., http://lori.mtad.am /files/docs /48550.pdf:
5. Ծառայություններ, https://yellextremepark.com/hy/services:
6. Հայաստանի ազգային ատլաս, հատոր Ա, Խմբագրական խորհուրդ, Եր., 2007, https://www.cadastre.am/atlasA:
7. «ՀՀ-ում սպորտային զբոսաշրջության զարգացման հայեցակարգին, հայեցակարգից բխող 2019-2022 թթ. ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/963/about:
8. ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն, Լոռի 2017, http://lori.mtad.am/files/docs/48161.pdf:

9. Հայաստանում առաջին անգամ անցկացվել է ռաֆտինգ, 2018, https://www.panorama.am/am/news/2018/05/21/%D4%B4%D5%A5%D5%A2%D5%A5%D5%A4-%D5%BC%D5%A1%D6%86%D5%BF%D5%AB%D5% B6%D5%A3/1952310:
10. ՀՀ Լոռու մարզը թվերով, https://www.armstat.am/file/doc/99517268.pdf:
11. ՀՀ Տավուշի մարզը թվերով, https://www.armstat.am/file/doc/99515863.pdf:
12. ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024 թթ., Տավուշ–2019, http://tavush.mtad.am/files/announcements/6448.pdf:
13. ՀՀ Լոռու մարզպետարան, Լոռու մարզի պատմամշակութային կոթողները, http://lori.mtad.am/historicalmonuments/:
14. ՀՀ Կառավարության 25 սեպտեմբերի 2014 թ. N 1059-Ա որոշումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZIPVB1H-dD778KWYVPOB9gkHMPWflzAYrEh_RCKct51pJ4VyeNfio:
15. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ, հաշվետվություն, «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ, Եր., 2012, http://www.zikatar.am/download/final_report_natural_monuments_2012.pdf:
16. ՀՀ Լոռու մարզի 2019 թ. գործունեության ծրագրի մոնիտորինգի հաշվետվություն, http://lori.mtad.am/files/docs/46187.pdf:
17. ՀՀ Տավուշի մարզի 2019 թ. գործունեության ծրագրի տարեկան մոնիտորինգի հաշվետվություն, http://tavush.mtad.am/development-plan/:
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf:
19. ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_25.pdf:
20. Մայմեխ ճոպանուղի, http://vanadzor.am/maymex-chopanuxi/:
21. Վանաձորի «Արմենիա» առողջարան, https://vanadzorarmenia.am/?page_id=2195:
22. Տավուշի մարզի Զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի հետազոտության արդյունքները ներկայացնող հաշվետվություններ, 2019, http://tavush.mtad.am/files /announcements/6448.pdf:
23. Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն)/ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Եր., 2014, 360 էջ:

24. Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, 2009, 290 էջ, http://tavush.mtad.am/files/announcements/6448.pdf:
25. Տուրիզմը կիաղթահարի հայաստանյան գյուղերի աղքատությունը, 2016, https://armeniasputnik.am/armenia/20160907/4830324/turizm-rusastan-mak-gyux.html:
26. Атлас-климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна, Ереван, 2010.
27. Известия МГТУ «МАМИ» № 4(18), 2013, т. 2.
28. Armenian Festivals Calendar, 2020, https://www.facebook.com/photo/?fbid=2480123452236431&set=pcb.2476352069280236.
29. Dong E., Wang Y., Morais D., Brooks D., Segmenting the Rural Tourism Market: The Case of Potter County, Pennsylvania, USA, Journal of Vacation Marketing, 2016, https://doi.org/10.1177/1356766712471231.
30. Fernández-Hernández C., León C. J., Araña J. E., Díaz-Pére F., Market Segmentation, Activities and Environmental Behaviour in Rural Tourism, Tourism Economics, 2015, https://doi.org/10.5367/te.2015.0476.
31. Kloeze Jan W., Rural Tourism: A Gender Approach, https://pdfs.semanticscholar.org/f3f4/829b08691154dc67deec311a90711e6a5d00.pdf?_ga=2.248583303.1257525698.1598266073-2106455267.1598266073.
32. Lagravinese R., Rural Tourism and Ancient Traditions: Evidence from Italian Regions, Local Economy: The Journal of the Local Economy Policy Unit, 2013, https://doi.org/10.1177/0269094213496612.
33. Properties Inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am.
34. Rátz T. L., Puczkó L., Rural Tourism and Sustainable Development in Hungary, 1998, http://caribana.co.ve/formacion/Rural%20turism%20indicator.pdf.
35. R&D Centers, http://www.rtd.am/en/rdcenters
36. Rural Tourism Resources Assessment Methodology Pilot Phase, Integrated Rural Tourism Development Project UNDP Armenia - 2017.
37. UWC Dilijan College, https://uwcdilijan.org/admissions/scholarships.
38. Xue L., Kerstetter D., Rural Tourism and Livelihood Change: An Emic Perspective, Journal of Hospitality and Tourism Research, https://doi.org/10.1177/1096348018807289.

САМВЕЛ АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра ''Амберд'' АГЭУ, доктор экономических наук, профессор

ГАЯНЕ ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра ''Амберд'' АГЭУ , кандидат экономических наук,

ЛУСЯ МИРИДЖАНЯН
Магистрант управления проектами АГЭУ

КРИСТИНЕ ТАТОСЯН
Магистрант делового администрирования АГЭУ

ИНГА ГАЛУСТЯН
Магистрант государственного управления АГЭУ

АРГИНЕ РУШАНЯН
Магистрант управления проектами АГЭУ

Анализ туристических ресурсов Лорийской и Тавушской областей РА. - Области Лори и Тавуш с их красивой природой, лесистыми горами и глубокими каньонами, свежим воздухом и лечебными водами, историческими и архитектурными памятниками, традиционным бытом и этническим разнообразием населения представляют особый интерес для развития культурного, религиозного, лечебного, городского, приключенческого, спортивного, фестивального, гастрономического и агро- и экотуризма. Развитие агротуризма имеет особое значение для оживления жизни в сельской местности, развития прибыльного предпринимательства с относительно небольшими инвестициями и для более полного использования туристических ресурсов регионов.

Ограничения на поездки COVID-19 заставили в 2020 году развить внутренний туризм. В этих условиях особенно возрос интерес городского населения к сельскому или агротуризму.

Целью данной статьи является анализ туристических ресурсов Лорийской, Тавушской областей Республики Армения, а также выявление препятствий для развития туризма, внесение предложений по более полному использованию имеющегося ресурсного потенциала.

Ключевые слова: *туризм, ресурс, Лори, Тавуш, инфраструктура.*
JEL: L83, O14, Z10

SAMVEL AVETISYAN
Senior Expert at "Amberd" Research Center of ASUE,
Doctor of Economics, Professor

GAYANE TOVMASYAN
Senior Researcher at "Amberd" Research Center of ASUE,
PhD in Economics

LUSYA MIRIJANYAN
MA Student of Project Management at ASUE

KRISTINE TATOSYAN
MA Student of Business Administration at ASUE

INGA GALUSTYAN
MA Student of Public Management at ASUE

ARGINE RUSHANYAN
MA Student of Project Management at ASUE

Analysis of Tourism Resources of Lori and Tavush Regions of the RA. Lori and Tavush marzes with their beautiful nature, forested mountains and deep canyons, healthy air and healing waters, historical and architectural monuments, traditional life and ethnic diversity of the population are of special interest for the development of cultural, religious, health, urban, agro, eco, adventure, sports, festival and gastronomic tourism. The development of agro-tourism is of special importance for the revitalization of life in rural areas, the development of profitable entrepreneurship with relatively small investments, and fuller use of the tourism resources of the regions.

COVID-19 travel restrictions triggered the development of domestic tourism in 2020. In these conditions, the interest of the urban population in rural or agro-tourism has especially increased.

The purpose of this paper is to analyze the tourism resources of Lori, Tavush marzes of the Republic of Armenia, as well as to identify the obstacles to the development of tourism, to make suggestions for fuller use of the existing resource potential.

Key words: *tourism, resource, Lori, Tavush, infrastructure.*
JEL: L83, O14, Z10